Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 260 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԵՐԿԱՐՕՐՅԱ ԴՊՐՈՑ»

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր և Վաղուհաս համայնքների դպրոցների աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու, կրթական հավասար հնարավորություններ ապահովելու և մանկավարժական համապարփակ մոտեցման միջոցով աշակերտների ու նրանց ընտանիքի զբաղվածության և այլ կարիքներին արդյունավետ աջակցելու նպատակով, դպրոցներում երկարօրյա ենթակառուցվածքների ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 26/1, ՀՎՀՀ՝ 02507456):
4.	Ծրագիրը կատարողը	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Բուզանդ 1, 31, ՀՎՀՀ՝ 02834897):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր և Վաղուհաս համայնքներ՝ կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	27,596,700 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր և Վաղուհաս համայնքների դպրոցներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	27 ապրիլի 2022 թ. - 31 հուլիսի 2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Յուրաքանչյուր դպրոցում վերանորոգվելու և արդիականացվելու են (կահավորվելու են) 2-ական դասասենյակ՝ տարրական և միջին դպրոցների համար 27 ապրիլի 2022 թ. - 31 հուլիսի 2022 թ. ընկած ժամանակահատվածում, 15,178,185 դրամ գումարի չափով: 2. Յուրաքանչյուր դպրոցում կառուցվելու է ճաշարան, խոհանոց և պահեստ՝ տաք սնունդ տրամադրելու համար՝ 27 ապրիլի 2022 թ. - 31 հուլիսի 2022 թ. ընկած ժամանակահատվածում, 12,418,515 դրամ գումարի չափով:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 10,825,020 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում): 2. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 7,216,680 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում): 3. Կահույքի և ուսումնական սարքավորումների ձեռքբերում՝ 5,300,000 դրամ (հարկային արտոնություններ ակնկալվում են): 4. Ճաշարանային սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 4,255,000 դրամի չափով (հարկային արտոնություններ ակնկալվում են):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Սույն ծրագրով կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքին ակտիվորեն ներգրավված են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Մարտակերտի շրջանի Առաջաձոր և Վաղուհաս գյուղերի համայնքապետարանները:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվություններ կներկայացվեն բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ